ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ապրիլի 2019թ. թիվ 230-Ա

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱՃԱՃԿՈՒՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 4, 7, 11, 15 և 17 կետերը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Կաճաճկուտի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ծնողական խորհրդի նախագահի 09.04.2019թ. և Ալավերդի համայնքի ղեկավարի 15.03.2019թ. թիվ 513 գրությունները՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. մարտի 15-ի «Լոռու մարզի դպրոցների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» թիվ 75-Ա որոշման հավելվածի «ՀՀ Լոռու մարզի Կաճաճկուտի հիմնական դպրոց» ՊՈԱԿ մասում՝

1. «Խանդամիրյան Գառնիկ» բառերը փոխարինել «Մաժինյան Անահիտ» բառերով, իսկ «Ոսկանյան Մարինե» բառերը՝ «Պողոսյան Սարգիս» բառերով:

2. Վերահաստատել ծնողական խորհրդի կողմից առաջադրված Սիլվա Գևորգյանի և համայնքի ղեկավարի կողմից առաջադրված Ռուզաննա Թամազյանի թեկնածությունները:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. ապրիլի 19
ք.Վանաձոր